ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը սեպտեմբերի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, հարգելի՛ մանկավարժներ և դասախոսներ.

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի և դպրության օրվա առիթով:

Սեպտեմբերի 1-ը տոնական օր է յուրաքանչյուրիս համար և առանձնահատուկ տարբերվող ու հիշարժան առաջին դասարան հաճախող երեխաների ընտանիքներում: Ջերմորեն շնորհավորում եմ բոլոր առաջին դասարանցիներին և նրանց ծնողներին կյանքի նոր շրջափուլ մուտք գործելու կապակցությամբ: Շնորհավորում եմ բոլոր առաջին կուրսեցիների նորամուտը բարձրագույն ուսումնական հաստատություններ, մաղթում եմ մեծ հաջողություններ ուսումնառության և մասնագիտական կրթության ոլորտում:

Աբովյան համայնքի սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ.

Գիտելիքը ուժ է և կարևոր նախապայման ձեր բարեկեցիկ ապագայի ու մեր համայնքի առաջընթացի հարցում, ուստի եղե՛ք խոհեմ, կարևորե՛ք ուսումը բարեխիղճ քաղաքացիներ և մասնագետներ դառնալու ճանապարհին:

Շնորհավորում եմ և անսպառ եռանդ ու մասնագիտական վերելքներ եմ ցանկանում մեր համայնքի բոլոր մանկավարժներին, մաղթում եմ՝ լինեք գնահատված սերունդների կրթադաստիարակչական շնորհակալ և պատասխանատու գործում:

Նոր ուսումնական տարվա մեկնարկին առանձնահատուկ ուզում եմ անդրադառնալ Աբովյանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններին, համայնքային ենթակայության կազմակերպություններին, որտեղ կրթական և կենցաղային պատշաճ պայմաններ ապահովելու նպատակով տարեցտարի լայնածավալ աշխատանքներ են տարվում: Համատեղ ջանքերով շարունակելու ենք բարեկարգել ու կառուցել մանկապարտեզներ և հետևողական աշխատանքով խթանել կրթական, մարզական, մշակութային կյանքի զարգացումը:

Սեպտեմբերի 1-ի առիթով կրկին շնորհավորում եմ բոլորիս. 2025-2026 ուսումնական տարում մաղթում եմ հաջողություններ, վերելքներ, անխափան և արդյունավետ ուսումնական գործընթաց բոլոր կրթօջախներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**